

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ

«ԱՅՍՕՐ ԵԿԵԼ ԵՆՔ ՈՒԽՏԻ ԵՎ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՊԻՏԻ ԳԱՆՔ»

Հոկտեմբերի 14-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբանության, բարձրաստիճան հոգևորականների և պատվարժան հյուրերի, ուղևորվեց դեպի Օշական, որտեղ Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց պատարագ՝ նվիրված հիշատակին Սրբոց Վարդապետաց Թարգմանչաց մերոց: Ամենայն Հայոց Հայրապետի այցը ջերմ խանդավառություն էր առաջ բերել հավատացյալ հայորդիների հոծ բազմության մեջ, որ եկեղեցի տանող ճանապարհը ողողել էր ծաղիկներով, արտաբուխ երգ ու պարով:

Պատարագի հոգեպարար արարողությունը, որը մատուցեց Հոգեշնորհ Տ. Գրիգոր վրդ. Զիֆթչյանը, պսակվեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական Պատգամով, որ խոսք էր՝ ուղղված մեր սուրբ վարդապետների հոգիներին ու գործին:

«Այս պահը մեր կյանքի ամենեն ներշնչողական օրերից մեկն է: Սովորական օրերից բոլորովին տարբեր, եզական նշանակություն ունեցող մի պահ: Այսօր մեր եկեղեցական հայրերի տոնակարգի համաձայն պանծացնում ենք հիշատակը, առաքելությունն այն բացառիկ անձանց, որ Աստվածը թարգմանեցին իրենց արյունով: Այսօր Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց Տոնն է: Թարգմանությունը նվիրական բառն է հայոց բառարանի: Այն չի նշանակում մի բնագիր այլ բնագրի թարգմանել: Նշանակում է Աստծո սերը մարդոց կյանքի մեջ ապրեցնել այդ ժողովրդի ավանդություններով: Այսօր եկել ենք ուխտի և ամեն տարի պիտի գանք»:

Վեհափառ Հայրապետը պատգամեց, որ այս օրը պիտի վերածենք ժամադրության հայ գրի մեծ նվիրյալների հետ և նրանց շարքում առաջինը Ս. Մեսրոպ Մաշտոցի հոգու հետ.

«Հարգանք Քեզ, ճգնակյաց վարդապետ: Եղար լույս ու բարիք, որ մեզ տեսար Աստծո հոգիով: Հարգանք Քեզ, գրասեր վարդապետ, որ Քո ժողովրդի տառապանքը Քո հոգու մեջ ապրեցիր: Հայության դիմագիծը նկարեցիր Քո Այբ, Բեն, Գիմ-ով:

Հարգանք Քեզ, Թարգմանիչ վարդապետ: Աստծո շունչը թափանցեց Քո գրով հայ մարդու շնչին մեջ:

Հարգանք Քեզ, ամենաքրիստոնյա վարդապետ: Դու ոչ միայն Աստվածաշունչը տվեցիր մեզ Քո գրով, այլ ողջ հայ գրականությունը: Մեր ոսկեդարյա գրականությունը Քո երկունքի ծնունդն է: Մեր ամբողջ հոգևոր ժառանգության Հայրն ես Դու, Մեսրոպ Մաշտոց»:

Ավարտելով Պատգամը, Հայոց Հայրապետը հոգևոր հայրերի և Աշտարակի շրջանի ղեկավարության ուղեկցությամբ դուրս եկավ եկեղեցու շրջափակ, որտեղ Նորին Սրբություն օրհնությամբ կատարվեց Գավազան-այան հուշակոթողի բացման հանդիսավոր արարողությունը, որ կանգնեցվել էր ի հիշատակ Ս. Մեսրոպի շիրիմին Գարեգին Ա Կաթողիկոսի առաջին այցելության: Վեհափառ Հայրապետը շնորհակալության խոսք ուղղեց հուշակոթողի հեղինակներին, շրջանի և գյուղի ղեկավարներին և այն բարերարներին, որոնց միջոցներով իրականացվել էր Գավազան-այան կառուցումը:

Ներկաների առաջ ելույթ ունեցան նաև Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Նավասարդ վրդ. Կճոյանը, Աշտարակի շրջգործկոմի նախագահ Ժ. Գևորգյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Պ. Հակոբյանը՝ մեկնելով Տոնը որպես հոգևոր վերազարթոնք:

Հանդիսության ավարտին երգով ու պարով, ավանդական զուռնայի հնչյունների ուղեկցությամբ օշականցիները ճանապարհեցին Ամենայն Հայոց Հայրապետին: